«ի վանս Սանդղկայ»։ ԺԱՄԱՆԱԿ. 1053 թ. փրկչական. «գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականութեան Հայոց ՇԲ ամի»։

Դաճօր. Թերթ 60, 63, 64, 65-կրկնագիր են. հին աւետարանի երկաթագիր հատուածներ, որոնցից երկուսը լուացուած են և երկուսը քերուած, և վերան բոլորգրով յետոյ գրուած։ Ընթերցուածների սկզբնագիրը ընագրի երկաթագրից փոքր ինչ մեծ և կողքից դէպի լուսանցքը զարդով կպած, յատուկ հին ձեռագիրներին, բայց երբեմն գեղեցիկ մանրանկարչական տառերով։

Նկարուած են՝ ա) բուն Ձեռագրից 130ա. ընագիրը (հաշուած ներքևի ծանօթութիւնները) 9,3×8½ սմ., մեր նկարը 10×9սմ., ուրեմն չնչին զանազանութեամբ մեծ ընագրից։

բ) Միխայլ ոսկերչի յիշատակարանը (նկ. 70) բոլորգրախառն շեղագրով. տարբեր շեղագրով նոյն ոսկերչի մի այլ յիշատակարանից իմանում ենք, որ «ՈԾ»—1201 թ. շնորհել է նա այս աւետարանը Ձաւրավար քահանային. «Որմենի հայրենիքն կոչի»—Ուրմիա? 310բ։ Ընագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

գ) 89ա Շեղագրով (նկ. 124) նուիրաբերութեան յիշատակարան 1323 թ. փրկչական. «գրեցաւ ի թվ. հայ. ՉՀԲ յունիսի ԺԱ.» Ընագիրը 21×16 սմ., մեր նկարը 11×8½ սմ.։

դ) Նոsրգիr (նկ. 134) նուիրաբերութեան յիշատակարան 1346 թ. փրկչական։ Հայոց «ՉՂԷ, ի մայիսի ԻԸ»։ Ընագիրը 18×8, մեր նկարը 10½×4,7 սմ.։

53. Մատ. Ս. Էջմ. Գ. № 362/3784. Աւետարան, նկարազարդ, մագաղաթ 43½×34, 287 թերթ։ ԳԻՐ. Խոշոր երկաթագիր, երկիջեան, 31½×9,2սմ.։ ԳՐԻՉ. Թովմա երէց, որդի Մովսէս քահանայի։ ՏԵՂ. Մելտինէ քաղաք, «ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի»։ ԺԱՄԱՆԱԿ. փրկչական 1057 թ. «ի թուականութեանս Հայոց ի հինգ հարիւր ու վեցն, ի կաթողիկոսութեանն տ՚ն Խաչկայ, յորժամ ի Թաւրլուրի վանս էր»։

Դաճօր. 207ա. Լուսանցքում մանրանկարչական զարդի մէջ՝ շեղագրով գրուած, անշուշտ գրութեան ժամանակից. «զՊաւղոս հայր յիշեցէք ի ք՚ս և զիս»· տես և 262ա.

Նկարուած է 161ա. մեծ երկաթագիր. ընագիրը 14×22 սմ., մեր նկարը 9×14,3 սմ.։

54. Մատ Ս. Էջմ. 369/311 (Կար. 362)։ Աւետարան, նկարազարդ։ Մագաղաթ, 23×15½ սմ., 281 թերթ։ ԳԻՐ. Բոլորաձև, միջին երկաթագիր, երկէջ, իւրաքանչիւրը 15×4,7 սմ.։ ԳՐԻՉ և ՍՏԱՑՈՂ. Գրիգոր քահանայ Ակուռեցի, որ 1021 թուին Վասպուրականի Սենեքերիմ թագաւորի գաղթի հետ հաստատուել էր Սեբաստիայում 281ա. ՏԵՂ. Սեբաստիա։ ԺԱՄԱՆԱԿ 1066 թ. փրկչ. «Շիտ թուոյս Հայոց»։

Դաճ. Աւետարանիս նկարագրութիւնն ու մանրանկարչութեան ուսում-